«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին*

Առարկան՝ *Տեխնոլոգիա*

Հետազոտող ուսուցիչ՝ *Սիրանուշ Գյուրջյան*

Ուսումնական հաստատություն՝ *Մասիսի միջնակարգ դպրոց*

Երևան 2023

Հետազոտական աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն	
Հետազոտությունն իրականացնող ուսուցչի տվյալներ	
Անուն, ազգանուն	Սիրանուշ Գյուրջյան
Աշխատավայրը(դպրոցի լրիվ անվանումը)	Մասիսի միջնակարգ դպրոց
Մասնագիտություն	Ուսուցչուհի
Հեռախոսահամար	093-49-15-60
Էլ. հասցե	guurjyansiranush@gmail.com
Դասավանդվող առարկա (առարկաներ)	Տեխնոլոգիա

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ 1 Վաղ գրաճանաչության հմտությունների ձևավորումը, որպես երեխաներին դպրոց նախապատրաստելու միջոց:

1.1.Երեխաների մանկավարժական և հոգեբանական նախապատրաստումը դպրոցական ուսուցմանը----------5

1.2.Վաղ գրաճանաչության ուսուցման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում----------11

1.3.Գրագիտության հմտությունների ձևավորումը որպես դպրոցականուսուցմանը նախապատրաստվելու միջոց---------- 14

Եզրակացություն----------18

Օգտագործված գրականության ցանկ----------20

Ներածություն

1. **Ի՞նչ պետք է իմանա սանը մինչ դպրոց գնալը:**
2. **Ի՞նչ բաղադրիչներ են անհրաժեշտ դպրոց հաճախող նոր աշակերտին զարգացվածության բավարար մակարդակ ունենալու համար:**
3. **Ի՞նչպես 6 տարեկան երեխայի մոտ հետաքրքրություն առաջացնել դեպի ուսումը** :

Արդի ժամանակներում առավել կարևորվում է 6 տարեկան երեխաներին դպրոցական ուսուցմանը նախապատրատվելու հարցը:

6 տարեկան երեխաներին դպրոցական ուսուցմանը ժամանակին նախապատրաստելը նպաստում է նրանց մեջ ուսումնական աշխատանքի նկատմամբ սեր և հետաքրքրություն դաստիարակելուն, անհամեմատ հեշտացնում է մանկապարտեզային կյանքից անցումը դպրոցական կյանքին, ուսումնառությանը: Ապահովվում է նաև կրթության երկու աստիճանների՝ նախադպրոցական և դպրոցական տարրական ուսուցման միջև եղած անհրաժեշտ հաջորդականությունը: Երեխային դպրոցին նախապատրաստել ասելով՝ շատ ծնողներ ու նույնիսկ մանկավարժներ հասկանում են նրան գիտելիքներով (գրելու, կարդալու, թվաբանական հմտություններով) զինելը: Սակայն, դպրոցին նախապատրաստել ասելով՝ առաջին հերթին հասկանում ենք՝ ինքնուրույնություն: Երեխան դպրոց հաճախելուց առաջ արդեն պիտի լիարժեք տիրապետի ինքնուրույն հագնելու-հանվելու, իր անկողինը՝ թեկուզև անփույթ, հավաքելու, ուտելու, իր պայուսակը դասավորելու, զուգարանից կոկիկ օգտվելու, իրեն հուզող հարցերը տալու, խնդրանք արտաբերելու և այլ նմանատիպ տարրական հմտությունների: Ինքնուրույնության պակասը ամենաշատն է խանգարելու երեխային ուսուցման գործընթացում: Շատ կարևոր է ուշադրությունը կենտրոնացնելու կարողությունը: Ծնողների մեծ մասը գիտի, որ փոքրիկ երեխաները դժվարանում են իրենց ուշադրությունը երկար ժամանակով կենտրոնացնել միևնույն գործի կամ դասի վրա: Սա անհանգստության առիթ չէ, և ոչ մի դեպքում պետք չէ երեխայի մեջ ինչ-որ շեղումներ փնտրել: Նմանատիպ խնդիրներն այս տարիքի երեխաների համար միանգամայն բնական են: Բազմաթիվ ծնողներ բողոքում են, որ երեխան դժվարանում է իր տեղում նստել երկար ժամանակ: Պատճառը կարող է լինել երեխայի ֆիզիկական կամ մտավոր խիստ ծանրաբեռնվածությունը: Հնարավոր է, որ նա բավարար չի քնում կամ հանգստանում, կամ օրվա ընթացքում սթրեսային իրավիճակներում է հայտնվում: Պետք է անպայման պարզել երեխայի դժվարությունների պատճառները:Լսել կարողանալը շատ կարևոր հմտություն է, որը պիտի օգնի նրան գիտելիքներ ձեռք բերել, որպես անձ ձևավորվել բազմազան իրավիճակներում ողջ կյանքի ընթացքում: Երեխային լսել սովորեցնելու մի քանի միջոց կա, սակայն դրանցից ամենակիրառականը մեկն է:

Ծնողները կարող են նպաստել երեխայի խոսքի զարգացմանը՝ բառերը ճիշտ արտասանելով, երեխայի սխալ արտասանություններն ուղղելով: Դպրոց գնալուց առաջ երեխան պիտի տիրապետի բանավոր խոսքին՝ ճիշտ արտասանի իրեն ծանոթ բառերը, ազատ և անկաշկանդ խոսի, ըստ անհրաժեշտության բարձր կամ ցածր՝

սեփական մտքերն արտահայտել կարողանա, հեքիաթների ու պատմությունների մասին հարցերին պատասխանի, հարցեր տա, եթե ինչ-որ բան պարզ չէ իրեն, անգիր հիշի կարճ բանաստեղծություններ և այլն: Նախադպրոցական տարիքի երեխայի համար պետք է ոչ փոքր տեքստերով շատ հեքիաթներ կամ զանազան պատմություններ կարդալ: Խոսքի զարգացումը, գրագիտությունն անմիջականորեն կախված են երեխային շրջապատող միջավայրի գրագետ խոսքի հագեցածությունից: Ելնելով դպրոց ընդունվող երեխաներին ներկայացվող արդի պահանջներից՝ հանձնարարվում է ավագ խմբում իրականացնել վաղ գրաճանաչության նախապատրաստում, որը հանդիսանում է մայրենի լեզվի բաժնի բաղադրիչներից մեկը: 6 տարեկանների վաղ գրաճանաչության վերաբերվող պարապմունքներն ունեն զարգացնող բնույթ:Վերլուծական, համադրական խոսքային վարժությունների համակարգի միջոցով ապահովվում է երեխաների մտավոր զարգացումը: Մտավոր զարգացումը կառուցվում է 6 տարեկան երեխաների կենդանի խոսքի, խոսքային կենսափորձի, կապակցված խոսքի համակարգի, խոսքային լսողության զարգացման հիման վրա: Երեխաներին պատկերացում է տրվում նախադասության– բառ – վանկ - հնչյուն վերլուծական շղթայի մասին:Այս պարապմունքների միջոցով ոչ միայն զարգանում են երեխաների մտավոր կարողությունները, այլև հոգեկան գործընթացները՝ ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը, նաև՝ կամքը, հույզերը, զգացմունքները, զգայարանները, այսինքն՝ ողջ հոգեկան աշխարհը՝ ազդելով զարգացումն ապահովող բոլոր բաղադրիչների վրա, որոնցով պայմանավորվում են ուսուցման գործընթացի նպատակների և խնդիրների իրականացումը: Հետևաբար, պարապմունքների ժամանակ կարևոր նշանակություն ունի ուսուցման զարգացնող խնդիրների իրականացումը:

Նպատակը և խնդիրները

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել վաղ գրաճանաչությունը, որպես երեխաներին դպրոցին նախապատրաստելու միջոց;

Նպատակին հասնելու համար իրագործել ենք հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ենք հետազոտվող թեման գիտամեթոդական գրականության մեջ և գործնականում
- Արդյունքների ամփոփում և վերլուծություն:

Գլուխ 1. վաղ գրաճանության հմտությունների ձևավորումը, որպես երեխաներին դպրոցին նախապատրաստելու միջոց

1.1.Երեխաների մանկավարժական և հոգեբանական նախապատրաստումը դպրոցական ուսուցմանը

Դպրոց ընդունվելը բեկումնային պահ է երեխայի կյանքում, անցում նոր սոցիալական պայմանների ու գործունեության ձևերի, հետևաբար պահանջում է դպրոցական ուսուցմանը երեխաների նախապատրաստման անհրա-ժեշտություն:

Ինչպես գիտենք, կրթության բոլոր օղակների միջև գոյություն ունի սերտ և տրամաբանական կապ, որն ապահովում է սահուն անցումը կրթության մի օղակից մյուսին և կրթական նպատակների ու խնդիրների արդյունավետ լուծումը: Այն առավել ընդգծված դրսևորվում է հատկապես մանկապարտեզի և դպրոցի միջև, մասնավորապես երեխայի դպրոցական ուսուցման նախապատրաստման առումով:

Երեխաների նախապատրաստումը դպրոցական ուսուցմանը մի կողմից ենթադրում է, որ նախադպրոցական հաստատությունները կոչված են երեխային դպրոց «հանձնել» անձի ձևավորման ու ընդհանուր զարգացվածության այնպիսի մակարդակով, որը համապատասխանում է դպրոցի պահանջներին, մյուս կողմից էլ՝ դպրոցը պետք է հիմնվի նախադպրոցականի ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և որակների վրա: Երեխայի դպրոցական ուսուցման նախապատրաստման նպատակը զարգացման բարենպաստ միջավայրի ապահովումն է, որտեղ ըստ ամենայնի կբացահայտվեն և կդրսևորվեն նրա ներքին հնարավորություններն ու կարողությունները, կզարգանան երեխայի հոգեկան, սոցիալական, ֆիզիկական կարողությունները, ինչն էլ կապահովի երեխայի հաջող մուտքն ու ուսումնառությունը դպրոցում, դպրոցական կյանքին նրա ադապտացիան:

Հայաստանի Հանրապետությունում, կրթական բարեփոխումների համատեքստում, մասնավորապես դպրոցի՝ տասներկուամյա կրթության անցման և դրանից բխող վեց տարեկանների կրթության կազմակերպման ժամանակակից փուլում, երեխայի դպրոցական ուսուցման նախապատրաստումը ձեռք է բերում նոր հնչեղություն և կարևորություն, նոր բովանդակություն և սոցիալ-հոգեբանական նշանակություն: Այս առումով նախադպրոցական կրթության ժամանակակից տեսության և պրակտիկայի առաջնահերթ խնդիր է դառնում դպրոցական ուսուցման նախապատրաստման հիմնախնդրի առավել խորը ուսումնասիրման անհրաժեշտությունը:Ամենից առաջ պետք է ցրել մտայնությունն այն մասին, որ երեխայի նախապատրաստումը դպրոցին տեղի է ունենում մանկապարտեզի վերջին տարիքային փուլում (և կամ էլ դպրոցական տարիքին նախորդող տարում): Դպրոցական ուսուցման նախապատրաստումը երկարատև և բարդ գործընթաց է, այն ընթանում է նախադպրոցական մանկության ողջ ընթացքում՝ երեխայի տարիքային առանձնահատկություններին համապատասխան: Եվ թերևս չկա առավել կոնկրետ և կամ նպաստավոր ժամանակ այդ գործընթացի կազմակերպման համար:

Նախադպրոցական կյանքի բոլոր տարիներին երեխայի ձեռք բերած նվաճումները կուտակվում են և դպրոցի շեմին տալիս են որոշակի որակ։

Ինչ խոսք, երեխայի դպրոցական ուսուցման նախապատրաստման անհրաժեշտությունը կասկած չի հարուցում։ Ընդ որում հարկ է, որ այն լինի նպատակաուղղված և համակարգված, ընթանա պարբերաբար՝ ընդգրկելով երեխայի կյանքի բոլոր ոլորտները։ Սակայն այդ աշխատանքները չպետք է վերածվեն ծանրաբեռնված վարժանքի և մարզման, այն պետք է ընթանա երեխայի բնական զարգացման, նրա ամենօրյա կյանքի, շփումների և խաղային գործունեության համատեքստում։ Եվ ամենակարևորն այն է, որ երեխայի հետ իրականացվող աշխատանքը պետք է զերծ լինի մեծահասակների զայրույթից և երեխաների արցունքներից։

Աշակերտը պարտավոր է ենթարկվել բոլոր դպրոցականների համար նախատեսված կանոններին, և յուրացնել դարձյալ բոլոր երեխաների համար նախատեսված գիտելիքները։ Դպրոցականի ուսումնական աշխատանքը հիմնականում տեղի է ունենում դասերի ընթացքում, որտեղ բոլոր երեխաները պարտավոր են հետևել ուսուցչի ցուցումներին, կատարել դրանք, չշեղվել և այլ գործերով չզբաղվել։

Աշակերտի կյանքի և գործունեության վերոհիշյալ առանձնահատկությունները լուրջ պահանջներ են ներկայացնում նրա անձնավորության տարբեր կողմերին, գիտելիքներին, կարողություններին, հոգեկան որակներին։ Այս համատեքստում էլ առաջանում է երեխային դպրոցին նախապատրաստելու անհրաժեշտություն։

Մի շարք հետազոտությունների տվյալներ ցույց են տալիս (Ս. Կ. Մարկովա, Ա. Բ. Օռլովա, Տ. Ա. Մարիս), որ դպրոցական պատրաստվածության արդյունավետ իրականացման հիմքը դպրոցի նկատմամբ երեխայի գիտակցական մոտեցման ձևավորումն է, իսկ վերջինս ձևավորվում է՝ կախված այն ինֆորմացիայի քանակությունից, որ երեխան տիրապետում է ընդհանրապես դպրոցի մասին։ Կարևոր է նաև այն, որ դպրոցի մասին տեղեկությունները երեխան ոչ միայն հասկանա, այլև զգա։ Հուզական փորձը օգնում է երեխային ընդգրկվել իր մտածողությունն ու հույզերն ակտիվացնող գործունեության մեջ։ Հուզական փորձը, սովորաբար, ձևավորվում է զրույցների, մեծահասակների կողմից իրենց հետաքրքիր դպրոցական կյանքի և սիրելի ուսուցիչների մասին կատարած պատմումների, դպրոցներում էքսկուրսիաներ կազմակերպելու, առաջին դասարանցիների հետ շփվելու, գեղարվեստական գրականություն ընթերցելու և այլնի միջոցով։ Փաստորեն դպրոցական ուսուցման նկատմամբ երեխայի հուզական փորձի ձևավորումը իր հերթին նպաստում է դպրոցի նկատմամբ դրդապատճառային պատրաստվածության ձևավորմանը, ինչն էլ հենց հանդիսանում է երեխայի սովորելու ցանկությունը։

Անդրադառնալով անձնային-դրդապատճառային պատրաստվածության խնդրին՝ Ն. Ա. Մենչինսկայան առանձնացնում է 2 խումբ ուսուցման դրդապատճառներ.

1.ուսուցման լայն սոցիալական դրդապատճառներ կամ դրդապատճառներ՝ կապված այլ մարդկանց հետ շփվելու երեխայի պահանջմունքի և իրեն հասանելի հասարակական հարաբերություններում որոշակի դիրք գրավելու ցանկության հետ,

2.դրդապատճառներ՝ կապված անմիջականորեն ուսումնական գործունեության, ճանաչողական հետաքրքրությունների և նոր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու հետ։

Երեխային դպրոցին նախապատրաստելու բարդ գործընթացում Վ. Վ. Դավիդովը կարևորում է երեխայի՝ մտավոր գործողություններ կատարելու, շրջապատող առարկաներն ու երևույթները առանձնացնելու և տարբերակելու, իր գործողությունները պլանավորելու ունակություններն ու կարողությունները, այսինքն նա առաջ է քաշում երեխայի դպրոցին ինտելեկտուալ պատրաստվածության հարցը:

Այսպիսով, եթե փորձենք ամփոփել երեխայի դպրոցին պատրաստվածության հիմնահարցի վերաբերյալ խորհրդային հոգեբանների մոտեցումներն ու տեսակետերը, նրանց կատարած ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքները, ապա տեսնում ենք, որ այն բավականին լայն հասկացություն է և ընդգրկում է երեխայի զարգացման գրեթե բոլոր ոլորտները: Նրանք առանձնացնում են դպրոցին պատրաստվածության հետևյալ բաղադրիչները.

1. Անձնային(դրդապատճառային) պատրաստվածություն, որն իր մեջ ներառում է երեխայի պատրաստվածությունը նոր սոցիալական դիրքին, այսինքն աշակերտի կարգավիճակին, աշակերտ, ով արդեն ունի որոշակի իրավունքներ և պարտականություններ։ Անձնային պատրաստվածությունը ենթադրում է նաև երեխայի դրդապատճառային ոլորտի զարգացման աստիճանի տարբերակումը։

2. Ինտելեկտուալ պատրաստվածություն, որը ենթադրում է երեխայի մտահորիզոնի և ճանաչողական գործընթացների զարգացման առկայություն։

3. Սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն, որն իր մեջ ներառում է երեխաների բարոյական և հաղորդակցական ունակությունների ձևավորումը։

4. Հուզակամային պատրաստվածություն, որը համարվում է ձևավորված, եթե երեխան կարողանում է իր առջև նպատակ դնել, որոշումներ ընդունել, գործողությունների պլան մշակել և մասնակցել դրանց իրականացմանը։

Նշվածների զարգացվածության բավարար մակարդակն էլ ապահովում է հետագա ուսումնական գործունեության արդյունավետությունը և դրանով իսկ վկայում երեխայի դպրոցական ուսուցման պատրաստվածության բարձր ցուցանիշների մասին։

Դպրոց ընդունվող երեխան պետք է հասուն լինի մտավոր, հուզական և սոցիալական զարգացմամբ։ Սա նշանակում է, որ պետք է զարգացած լինեն երեխայի՝

- տարբերակված ըմբռնումը, կամածին ուշադրությունը, վերլուծական մտածողությունը (մտավոր հասունացում),
- հուզական կայունությունը. ինքնաբուխ ռեակցիաների բացակայություն (հուզական հասունություն),
- հասակակիցների հետ հաղորդակցվելու պահանջմունք, մանկական խմբի պահանջներին և հետաքրքրություններին ենթարկվելու ունակությունը, դպրոցականի սոցիալական դերի գիտակցում և ընդունում(սոցիալական հասունացում):

Եթե փորձենք առավել կոնկրետացնել վերը նշված մոտեցումներն ու տեսական դրույթները, ապա կարող ենք առանձնացնել դպրոցիննախապատրաստելու 2 ասպեկտ՝ հատուկ կամ մասնավոր նախապատրաստում և ընդհանուր նախապատրաստում:

Հատուկ նախապատրաստումը նախատեսում է երեխաների զինումը այնպիսի գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով, որոնք անհրաժեշտ են դպրոցում մաթեմատիկա և մայրենի ուսումնական առարկաներն ուսումնասիրելու համար: Ընդհանուր նախապատրաստման մեջ տարբերում ենք հոգեբանական և ֆիզիկական նախապատրաստումը: Վերջինս ենթադրում է երեխայի առողջության և ֆիզիկական զարգացվածության բավարար մակարդակը, որն անշուշտ կարևոր է դպրոցում հաջող սովորելու համար:

Սովորաբար տարբերակում ենք հոգեբանական պատրաստվածության 2 ասպեկտ՝ անձնային (դրդապատճառային) և ինտելեկտուալ:

Դպրոցական ուսուցման անձնային պատրաստվածությունը: Բոլորին քաջ հայտնի է, թե որքան դժվար է երեխային սովորեցնել, երբ երեխան ինքը չի ցանկանում: Որպեսզի երեխան լավ սովորի , նա պետք է ձգտի նոր դպրոցական կյանքին, «լուրջ պարապմունքներին», «պատասխանատու հանձնարարություններին». (դրդապատճառային պատրաստվածությունը ձևավորված է եթե՝ ա) երեխան ցանկանում է դպրոց գնալ, բ)ձգտում է իմանալ նոր և հետաքրքիր տեղեկատվություն, գ) ձեռք բերել նոր գիտելիքներ): Նման բնույթի ցանկությունների ի հայտ գալուն մեծապես նպաստում են՝

- հարազատների, մեծահասակների վերաբերմունքն ուսումնական գործունեությանը որպես անչափ կարևոր բովանդակային գործունեություն, անգամ առավել նշանակալից, քան նախադպրոցականի խաղը,
- մյուս երեխաների վերաբերմունքը, ինքնին հնարավորությունը նոր տարիքային աստիճանի բարձրանալու փոքրիկների աչքում և դիրքով համեմատվելու ավագների հետ:

Արդյուքում նրանում ձևավորվում է դպրոցականի ներքին դիրքորոշում:

Ի սկզբանե, դպրոցական ուսուցման սկզբնական շրջանում երեխայի առավելապես գրավում են դպրոցական կյանքի արտաքին ատրիբուտները՝ պայուսակը, շենքը, համազգեստ: Ի հայտ է գալիս նոր տպավորությունների, նոր իրավիճակների, նոր ընկերներ ձեռք բերելու պահանջմունք: Եվ միայն ավելի ուշ (երբ երեխան տիրապետում է գեղեցիկ գրելու հմտությանը, ձեռք է բերում որոշակի գիտելիքներ շրջապատող կյանքի և բնության վերաբերյալ) դրսևորվում է սովորելու, ինչ-որ նոր բան իմանալու, իր կատարած «աշխատանքի» համար գնահատականներ (բնականաբար միայն բարձր) ստանալու և պարզապես բոլորի կողմից գովասանքի արժանանալու պահանջմունքը, դպրոցական այս կամ այն առարկայի գծով հետաքրքրվածություն:

Երեխայի ձգտումը սոցիալական նոր դիրքի կրտսեր դպրոցական տարիքում մի շարք հոգեբանական առանձնահատկությունների նախադրյալ է հանդիսանում: Մասնավորապես նրանից բխում է երեխայի պատասխանատու վերաբերմունքը ուսումնական գործունեության նկատմամբ, այս դեպքում երեխան կատարում է ոչ միայն իրեն հետաքրքիր հանձնարարություններն ու տնային առաջադանքները, այլև մնացած բոլոր հանձնարարությունները, որոնք նա պարտավոր է կատարել որպես աշակերտ:

Բացի ուսման նկատմամբ ընդհանուր առմամբ վերաբերմունքից, դպրոց ընդունվող երեխայի համար կարևոր է նաև վերաբերմունքն ուսուցչի, համադասարանցիների և ինքն իր նկատմամբ: Ուսուցման դաս-դասարանային համակարգը ենթադրում է ոչ միայն ուսուցիչ-երեխա հատուկ հարաբերություններ, այլև առանձնահատուկ հարաբերություններ համադասարանցիների հետ: Քանի որ ուսումնական գործունեությունն ըստ էության խմբային գործունեություն է, այն պահանջում է գործնական շփումներ աշակերտների միջև, հաջող փոխգործունեություն՝ համատեղ ուսումնական խնդիրներ կատարելիս:

Անձնային պատրաստվածությունը նաև երեխայի վերաբերմունքն է իր նկատմամբ, իր ուժերի ու հնարավորությունների նկատմամբ: Արդյունավետ ուսումնական գործունեությունը ենթադրում է երեխայի համարժեք վերաբերմունք սեփական կարողությունների, աշխատանքի արդյունքների, վարքագծի նկատմամբ, այսինքն, ինքնագիտակցության զարգացման որոշակի մակարդակ: Դպրոցականի ինքնագիտակցությունը չպետք է լինի բարձրացված և ոչ էլ՝ չտարբերակված: Եթե երեխան հայտարարում է, որ ինքը լավն է, և որ, օրինակ, իր նկարածը ամենալավն է (ինչն առավել բնորոշ է նախադպրոցականին), ապա մենք չենք կարող արձանագրել երեխայի դպրոցական ուսուցման հաջող պատրաստվածություն:

Ինչպես գիտենք, կրտսեր դպրոցականի նպատակը ուսումնական գործունեության ձևավորումն է: Ուսումնական գործունեությունը գիտակցված գործունեություն է՝ ուղղված գիտելիքների, հմտությունների ու կարողությունների յուրացմանը, գիտությունների հիմքերի տիրապետմանը: Այն ձևավորվում է աստիճանաբար, նրա ձևավորումն ընթանում է ողջ տարրական կրթության ընթացքում:

Ուսումնական գործունեությունը ենթադրում է կամայնության որոշակի մակարդակ, սեփական գործողությունները պլանավորելու և հսկելու ունակություն, ուսումնական աշխատանքը, առաջադրանքը մինչև վերջ կատարելու ունակություն, կենտրոնացում ուսուցչի կողմից դրված խնդրի վրա, ինքնուրույն ուսումնական աշխատանք կատարելու, սեփական աշխատանքը ճիշտ գնահատելու կարողությունների զարգացում։

Այս տեսանկյունից անչափ կարևոր է կյանքի վեցերորդ տարին։ Հենց այս տարիքում է ձևավորվում վարքի կամայնությունը, բուռն կերպով զարգանում ակնառու-պատկերավոր մտածողությունը, նորագոյացություններ, որոնք էլ հենց ապահովում են երեխայի հոգեբանական պատրաստվածությունը դպրոցական հաջող ուսուցմանը։

1.2.Վաղ գրաճանաչության ուսուցման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Ուսումնական գործունեության ընթացքում ամենակարևոր խնդիրներից մեկը սովորողների խոսքի զարգացումն է, հաղորդակցվելու կարողության ձևավորումը, քանի որ մարդու հիմնական յուրահատկություններից մեկը հաղորդակցվելու ընդունակությունն է. խոսքի միջոցով են իրագործվում բարձրագույն հոգեկան գիտակցական գործընթացներն ու շփման առավել կատարյալ, սոցիալական տեսակետից անհրաժեշտ ձևերը: Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, և այն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է ճիշտ կազմակերպված աշխատանք, որի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սովորողը գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ ստանում է իր կյանքի հետագա գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ: Ուսումնառության ընթացքում իրականացվում է երեխայի հոգեկանի զարգացումը, ձեռք է բերվում գիտելիք, մշակվում այլընտրանքային ճանապարհով գիտելիքների ձեռքբերման կարողություն, ձևավորվում ճանաչողական ընդունակություններ, մարդկանց և իր նկատմամբ սեփական վերաբերմունքի դրսևորում: Կրթության հետ միաժամանակ երեխան պետք է դառնա նախաձեռնող, կարողանա ինքնուրույն հետազոտել, ստեղծագործել, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում, փոխանցել իր իմացածը, ձեռք բերել հաղորդակցական, համագործակցային կարողություններ և ինքնուրույնություն: Կրտսեր դպրոցական տարիքը գիտելիքների կուտակման տարիք է, և այս տարիքի երեխաները պատրաստակամ են գիտելիքներ ձեռք բերելու հարցում: Ուսուցման հիմքը դրվում է ուսումնառության սկզբնական շրջանում և այնուհետև շարունակվում դպրոցական ողջ տարիների ընթացքում, և ոչ միայն…Նոր դպրոց մտնող երեխայի խոսքի զարգացման աշխատանքներն իրականացվում են լեզվական տարրական գիտելիքների ուսուցման միջոցով, որի ընթացքում լուծվում են աշակերտի խոսքի զարգացման մի շարք խնդիրներ՝ հնչյունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը, ճիշտ շեշտադրումը, բառակապակցություններ, ապա նախադասություններ կառուցելու կարողությունը, բառիմաստի ընկալման, ճիշտ կիրառման և պատկերավոր խոսք կառուցելու կարողությունը: Ամրապնդման համար համապատասխանաբար կատարվում են ճանաչողական և կիրառական վարժություններ: Սկսած նախաայբբենական շրջանից՝ աշակերտներին գաղափար է տրվում բանավոր և գրավոր խոսքի մասին, պատումի, նախադասության մասին, զարգացվում նրանց տեսողական-պատկերային մտածողությունը, ձևավորվում մտքերը հասկանալի և ճիշտ ձևակերպելու, հաղորդակցվելու, ինքնարտահայտվելու կարողություններ: Ուսուցման ընթացքում ուսուցիչը կրտսեր դպրոցականների առջև խնդիր է դնում իր կողմից առաջադրվող հարցերին տալ լիարժեք և տրամաբանված պատասխաններ, խոսել ճիշտ ու գրագետ, խուսափել անհարկի կրկնություններից: Հատկապես ուշադրություն պետք է դարձնել, որ աշակերտը ազատ և անկաշկանդ մտածի և հաղորդակցվի, կարողանա հասկանալ տրված հարցերը և ճշգրիտ պատասխանել դրանց, կարողանա ճիշտ կողմնորոշվել խոսքային իրադրության մեջ: Երեխային առաջարկում ենք պատմել իր, ընտանիքի, ընկերների, սիրելի իրի և այլ առարկաների կամ երևույթների մասին, սովորեցնում համեմատել և գտնել առարկաների նմանություններն ու տարբերությունները և այլն, ձևավորում ենք

դիմացինի խոսքը լսելու կարողություն: Աշխարհաճանաչողական տեղեկությունների միջոցով զարգացնում ենք խոսքն ու մտածողությունը, նոր բառերի միջոցով հարստացնում բառապաշարը, այն մաքրում ժարգոնային, բարբառային, մակաբույծ բառերից՝ բացատրելով, որ «ամեն մի ավելորդ բառ մոտավորապես նույնն է, ինչ դերասանի համար ավելորդ շարժումը, երաժշտի համար՝ ավելորդ ձայնը, հնչյունը, նկարչի համար ավելորդ գույնն ու վրձնահարվածը»: Արդեն ավագ նախադպրոցական շրջանում աշխատանքներ են տարվում խոսքի, բառի, նախադասության և տեքստի շուրջ, գործնականում կիրառում լեզվական նախնական գիտելիքները: Օրինակ՝ բառի մասին գաղափար կազմելու համար երեխաներին հարցնում ենք, թե ինչ են տեսնում իրենց շրջապատում, աշակերտները սկսում են անվանել տարբեր առարկաներ, այնուհետև հարցնում ենք, թե ինչպես են տարբերում այդ առարկաները, աշակերտները անվանում են առարկաների տարբեր հատկանիշներ, բնութագրում են դրանք, ասում, թե որ առարկան ինչի համար է: Գրաճանաչության մեթոդիկան զբաղվում է գրաճանաչության ուսուցման հարցերով՝ գրուսուցման ժամանակակից մեթոդի, 6—7 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունների, այբբենարանի կառուցվածքի ու բովանդակության, ուսումնական աշխատանքի գիտական կազմակերպման, երեխաների համակողմանի դաստիարակության խնդիրների ընդգրկումով: Այս առումով էլ գրաճանաչության մեթոդիկան հենվում է ժամանակակից մանկավարժության ու դիդակտիկայի, մանկավարժական հոգեբանության ու մարդաբանության, մայրենի լեզվի մեթոդիկայի հնչյունաբանության վրա, որոնք նրա տեսական հիմունքներն են կազմում՝ յուրաքանչյուրը յուրովի նպաստելով գրաճանաչության ուսուցման գիտական սկզբունքների մշակմանը: Հաշվի առնելով 6 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունները՝ վաղ գրաճանաչության ծրագրային խնդիրների լուծումն իրականացվում է բազմազան խաղերով, դիդակտիկ վարժություններով, հանելուկ-խնդիրներով, խաղ-վարժություններով, շուտասելուկներով և ընդհանուր զարգացմանը նպաստող այլ վարժություններով հագեցված պարապմունքներում:

Գրաճանաչության ուսուցումն ունի 2 շրջան՝ նախապատրաստական և բուն գրուսուցման: Մանկապարտեզի խնդիրն առաջին շրջանը վարելն է: Այդ շրջանում երեխաների խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում գլխավորը նրանց բառապաշարի ճշտման, հղկման ու հարստացման, ինչպես նաև կապակցված խոսք կառուցելու ունակության մշակումն ու զարգացումն է: Այս շրջանում հատուկ աշխատանք է տարվում նկարի, տեսածի, լսածի մասին կապակցված և ամբողջական ձևով պատմելու, խոսքից կամ պատմությունից նախադասությունն առանձնացնելու, նախադասությունը բառերի վերլուծելու, պահանջված բառն անջատելու, բառը վանկերի բաժանելու, վանկերը հնչյունների վերածելու և այդ հնչյունների շարքից անհրաժեշտ հնչյունն առանձնացնելու կարողությունները մշակելու ուղղությամբ: Երեխաներին գաղափար է տրվում նաև հնչյունի և տառի մասին (հնչյունը լսում ենք, արտասանում, տառը տեսնում ենք, կարդում ու գրում):

Վաղ գրաճանության նախապատրաստման գործընթացը զարգացնող դարձնելու հիմնական պահանջը երեխաների ուսումնական գործունեության ընթացքում՝ դա ինքնուրույն աշխատանքի ծավալումն է և սիմվոլիկ զննականության օգտագործումը:

Գրաճանաչության նախապատրաստման հաջորդ սկզբունքը դաստիարակող ուսուցման սկզբունքն է, որը դիդակտիկայում կիրառվող հիմնարար սկզբունքներից է։

Գրաճանաչության պարապմունքների հիմնական նպատակն ոչ թե կարդալ-գրելու ուսուցումն է, այլ հնարավորին չափով լավ նախապատրաստել դպրոցական ուսուցմանը։

1.3.Գրագիտության հմտությունների ձևավորումը որպես դպրոցական ուսուցմանը նախապատրաստվելու միջոց

Այսօր դպրոցին ներկայացվող ժամանակակից պահանջներին զուգընթաց փոխվել են նաև մանկավարժներին ներկայացվող պահանջները: Գրաճանաչությունը մանկապարտեզում ստացել է նոր որակ:

Գրաճանաչության ուսուցման մեթոդիկան ստեղծվել է գրերի գյուտից անմիջապես հետո, գրավորի մշակույթի և դպրության սկզբնավորման հետ միաժամանակ: Գրաճանաչության ուսուցման նոր մեթոդների ստողծման գործում մեծ նշանակություն են ունեցել Ֆ. Գիդեկենը, Հ. Ստեֆանին, որոնց ստեղծած մեթոդիկայի հիմքում ընկած էին հնչյունների համադրումը դեպի նոր ամբողջական միավորը՝ նախադասությունը և այդ միավորը վերլուծելու միջոցով դեպի խոսքի տարրական մասնիկները գնալու գիտակցության սկզբնավորումը:Ահա թե որոնք են նախնական գրաճանաչության ձևավորման գործընթացի բաղադրիչները.

- *Կարդալ և գրել սովորելը սկսվում է կյանքի շատ վաղ շրջանում:*

Երեխաները, որպես կանոն, շատ վաղ են շփվում գրավոր լեզվի հետ: Տանը նրանց համար գրքեր են կարդում, նրանք տանը և դրսում տեսնում են ամենատարբեր ցուցանակներ, պիտակներ և պատկերանիշեր: Վաղ տարիքում երեխաները փորձում են նաև «գրել»՝ խզբզել:

Կարդալն ու գրելը վաղ տարիքում զարգանում են միաժամանակ և փոխկապակցված*:* Երեխաները չեն սովորում նախ՝ կարդալ, իսկ հետո՝ գրել: Իրականում գրելը՝ որպես վաղ ուսումնական գործունեություն, երեխաների համար ավելի հեշտ է, քան կարդալը:

Գրաճանաչությունը զարգանում է իրական կյանքի իրավիճակներում, որտեղ կարդալն ու գրելը ծառայում են որոշակի գործողություններին:

Երեխաները գրաճանաչություն են սովորում ակտիվ ներգրավվելով որոշակի գործունեության մեջ, օրինակ՝ իրենց սիրելի պատմություններն «ընթերցելու» միջոցով: Երբ երեխան մատը, սահեցնելով գրքի տողերի վրայով, «վերընթերցում» է իր սիրելի գիրքը, նա անգիր չի կրկնում մտապահված տեքստը, այլ ավելի շուտ վերակառուցում է գրքի բովանդակությունը: Կամ երեխաները հաճախ ձևացնում են, թե գրում են, Գրելու այդ նմանակումը մի ձև է՝ տեսնելու այն հնչյունների տարրերը, որոնք ծանոթ են երեխային:

Երեխաների համար կարդալը հատուկ դեր է խաղում վաղ գրաճանաչության զարգացման համար :

Գրագիտության ուսուցման էությունը որոշելու համար նախ անհրաժեշտ է իմանալ ինչ առանձնահատկություններ ունի գրավոր խոսքը, և առաջնայինը կարդալ թե գրել

իմանալն է: Կարդալը և գրելը խոսքային գործունեության տեսակներ են, որոնց հիմքում ընկած է բանավոր խոսքը: Երեխայի գրագիտության ուսուցման հիմք է հանդիսանում երեխայի ընդհանուր խոսքային զարգացումը:Ազատ խոսքը կարևոր գործոն է գրավոր խոսքի ուսուցման համար: Դա դպրոցին հոգեբանորեն նախապատրաստվելու կարևոր գործոն է:

Խոսքի ձևավորման, գրաճանաչության զարգացման, գրագիտության ուսուցման ցուցանիշներ են հետևյալ ունակությունները՝ ուշադրությունը սևեռել խոսքային խնդրին, ազատ կազմել մտքերը, մտածել,գնահատել խոսքը: Էլկոնինը իր ուսումնասիրություններում եկել է այն եզրահանգման, որ կարդալու ուսուցումն առավել հեշտ է բառերի վանկային վերլուծություն կատարելով, քանի որ վանկը բնական արտահայտչականության միավորն է: Կարդալու ընթացքում վանկատումը դժվարություն չի առաջացնում: Հայ գիրը հնչյունատառային է: Այն հստակ արտահայտում է խոսքը: Կարդալու հոգեբանական մեխանիզմը հետևյալն է. սկզբնական փուլը բառի հնչյունային կողմի և տառային մոդելի գիտակցման գործընթացն է: Այն որոշում է գրաճանաչության ուսուցման ուղին՝ տառերի հնչյունային նշանակության ուսումնասիրությունից մինչև խոսքի հնչյունային կողմի վերլուծահամադրական գործընթացը: Այսօր կիրառվում են Էլկոնինի մեթոդը,Կիրյուշկինի, Շանկոյի, Գորեցկու հնչյունավանկային մեթոդները: Այս մեթոդների հիմքում ընկած է կարդալու տեսակետային սկզբունքը, օրինակ՝ տուն, տար, տիր, տեղ բառերի մեջ «տ» հնչյունն իր արտաբերումը փոխում է՝ կախված նրանից, թե ինչ հնչյուն է իրենից հետո: Երեխան պետք է կարողանա ճիշտ արտաբրել բաղաձայն և ձայնավոր հնչյունները բառերի մեջ: Կարդալու մեխանիզմի վերլուծությունը ցույց է տալիս , որ անհրաժեշտ է մեծ նշանակություն տալ երեխայի հնչյունային լսողության զարգացմանը, որը մարդկային խոսքի հնչյուններն ընկալելու ընդունակություն է:Մանկան խոսքի զարգացման մի շարք ուսումնասիրությունները \Գվոզդև, Շվաչկին, Լյամինա/ ցույց են տվել, որ հնչյունային խոսքը շատ վաղ է զարգանում: 2 տարեկան երեխան արդեն որոշակիորեն տիրապետում է մայրենի լեզվին, իսկ 5 տարեկան երեխան տիրապետում է խոսքի հնչյոննային կողմին, և հենց այս տարիքն էլ կարելի է համարել բարենպաստ տառաճանաչության համար: Գրաճանաչության զարգացումը տեղի է ունենում ոչ միայն ավագ տարիքում, այլ ողջ նախադպրոցական մանկության շրջանում:

- 3-4 տարեկանում ձևավորվում է բառի հնչարտաբերումը;
- 4-5 տարեկանում երեխան գործնականում ծանոթանում է «բառ» և «հնչյուն» տերմիններին, դրանք կարողանում է կիրառել վարժությունների, խոսքային, բառային, խաղերի ընթացքում: Երեխան ծանոթանում է կարճ բառերին, ձայնավոր և բաղաձայ հնչյուններին:
- 5-6 տարեկան երեխային սովորեցնում են կատարել բառի հնչյունային վերլուծություն, տեղին կիրառել սովորած տերմինները:

«Բառ» տերմինը երեխան յուրացնում է հաղորդակցման ընթացքում, բառապաշարի ակտիվացման, հարստացման միջոցավ: Դաստիարակը պետք է հաճախակի կրկնի հետևյալ արտահայտությունները. «Լսիր, ես ինչպես եմ արտասանում այս բառը», «

Ճիշտ արտասանիր այս բառը» և այլն։ Կարելի է օգտվել գրական ստեղծագործություններից, հեքիաթներից, խաղերից։

Ծանոթացում նախադասության բառակազմի հետ։ Նախադաության հետ ծանոթացման ժամանակ նախ ահրաժեշտ է նախադասությունն առանձնացնել խոսքից։ Օրինակ ՝ նկարով պատմումի ժամանակ նախ անհրաժեշտ է առանձնացնել պատմվածքի յուրաքանչյուր նախադասությունը։ Բացատրել, որ ամեն մի նախադասություն ունի իր միտքը։Նախադասության ամրապնդման համար անհրաժեշտ է օգտագործել հետևյալ հնարները՝ տրված բառերով կազմել նախադասություն, անվանել նկարը, փոքրիկ պատմություն հորինել աղվեսի մասին, երկու նկարներով կազմել մեկ նախադասություն և այլն։ Ուսուցումը սկսվում է պարզ նախադասություններից / 2-3 բառ, օրինակ՝ տիկնիկը քնեց\։Ուսուցման հիմքում ընկած է ճիշտ արտասանությունը, ձայնով բառերի առանձնացնումը, դրանց քանակի և հերթականության որոշումը։

Ծանոթացում բառի վանկային կազմին։ Ընթերցանության նախապատրաստումը ենթադրում է վանկերով, այլ ոչ թե տառերով կարդալու ունակության ձևավորում։ Բառի վանկային կազմի հետ ծանոթացման խնդիրը կայանում է նրանում, որ երեխաները գիտակցեն բառի վանկային կազմը, դրանց հաջորդականությունը բառի մեջ և քանակը, կարողանան տրված վանկերով բառեր կազմել։Դա շատ բարդ գործընթաց է, որն երեխայից պահանջում է բարդ մտածական գործողություններ։ Ուսուցման սկզբնական շրջանում կիրառվում են երկվանկանի բառեր՝ կա-տու; գընդակ; աղ-վես։Երեխաները դրանք լսում են նախադասությունների մեջ և կրկնում։ Այնուհետև երեխաներին առաջարկվում է ասել, թե բառի մեջ քանի վանկ կա։ Դաստիարակը հենվում է ոչ միայն երեխաների լսողական ընկալման, այլև տեսողական ընկալման վրա։Ողջ ուսումնական գործընթացում կիրառվում են բառերի մեջ վանկերի քանակի և հերթականության որոշման հնարներ։ Այս խնդիրների իրագործման համար կիրառվում է «Կենդանի վանկ» խոսքային խաղը, որը նախորդ խաղի նման է, այստեղ երեխաները հանդես են գալիս «կենդանի վանկերի» դերում։

Բառի հնչյունային կազմի հետ ծանոթացման գործընթացում անհրաժեշտ է արտասանվող բառը դարձնել սաների դիտման և վերլուծության օբյեկտ։ Սաների կողմից բառի հնչյունային կողմի հետ ծանոթացումը սկսում է կրտսեր և միջին խմբերում, երբ հնչյունային կուլտուրայի դաստիարակության ընթացքում վարժությունների և խոսքային խաղերի միջոցով սաները սովորում են պարզ և հասկանալի արտասանել հնչյունները, արտասանել որոշակի հնչյուն պարունակող բառեր, դրանք արտասանել ձայնի տարբեր ուժգնությամբ։ Երեխաներին բառը հնչյունային վերլուծության ենթարկել սկսում են սովորեցնել միջին խմբում։Այս փուլը համարվում է նախապատրաստական փուլ հնչյունային վերլուծության, իսկ հետագայում նաև՝ ընթերցանության ուսուցման համար։

Ավագ նախադպրոցական տարիքում խնդիր է դրվում ձևավորել հնչյունային վերլուծության ունակությունը։ Իրականացվում է հետևյալ կերպ.

1. Բառերում հնչյունների դասավորության որոշում,
2. Հնչյունների տարբեր գործառույթների որոշում,
3. Տվյալ լեզվին հատուկ հիմնական հնչյունային հակասությունների որոշում

Ավագ նախադպրոցական տարիքում ձեռքի և աչքի՝ գրուսուցմանը պատրաստելու հիմնական խնդիրները հետևյալն են.

1. Տեսողական ճիշտ ընկալման զարգացում, ամբողջից մասնակի անջատելու, դրանք նորից ամբողջացնելու ունակության զարգացում, տարածության ճիշտ դիֆերենցման զարգացում;
2. Տարածության մեջ կողմնորոշվելուկարողության զարգացում \աջ, ձախ, աջ կողմում, ձախ կողմում, վերև, ներքև/;
3. Ծանոթացում գրելու կանոններին/գրում ենք ձախից աջ՝ պահպանելով տառերի համաչափությունը և դրանց միջև եղած հեռավորությունը\;
4. Ձեռքի մանր մկանները պատրաստել գրելուն, ինչպես նաև մշակել տրված պահանջին համապատասխան սեփական գործողությունները կառավարելու ունակություն;
5. Մշակել իր դիտումներին և կատարած գործողություններին խոսքային բացատրություն տալու ունակություն;
6. Սովորեցնել գրելուց առաջ նստել համապատասխան դիրքով, աչքերը տետրից պահել որոշակի հեռավորության վրա \30սմ/, տետրը դնել համապատասխան ձևով։

Այս ամբողջ հմտությունները ձևավորելը, ճիշտ ուսուցումը կնպաստի հետագայում դպրոցում ազատ, անկաշկանդ և հաճույքով ուսուցմանը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք մեր ուսումնասիրության ընթացքում նկատեցինք,որ գրաճանաչության պարապմունքների ընթացքում հարկավոր է կարևորել զարգացնող խնդիրների իրականացումը և ակտիվացնել սաների հոգեկան գործընթացները՝ ուշադրությունը, հիշողությունը և մտածողությունը, ամրապնդել կամքը: Անհրաժեշտ եղավ հղկել սովորողների հույզերը, զգացմունքները, այսինքն՝ ողջ հոգեկան աշխարհը: Հղկել ասելով ի նկատի ունենք երեխայի հետ լինել հավասարը հավասարի ,որ կարողանանք հասկանալ իրենց : Մենք հասկացանք ,որ գրաճանաչության գործընթացը զարգացնող դարձնելու հիմնական պահանջներից են երեխաների ուսումնական գործունեությունն ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի վերածումը և խորհրդանշանային զննականության օգտագործումը: Հաշվի առանք ,որ 6 տարեկան սաների տարիքային առանձնահատկությունները՝ ծրագրային խնդիրների լուծումն իրականացվում է ընդհանուր զարգացմանը միտված բազմազան խաղերով, դիդակտիկական վարժություններով, հանելուկ-խնդիրներով և շուտասելուկներով հագեցված պարապմունքների միջոցով: Խաղային մեթոդներով անցկացվող թատերականացված պարապմունքներն ուսուցանվող նյութը դարձնում են առավել հետաքրքիր, մատչելի և բովանդակալից:

Հետազոտական աշխատանքի վրա աշխատանքը, տեսական գրականության ուսումնասիրությունը և վերլուծությունը մեզ բերեցին հետևյալ եզրահանգումների

- Եթե փորձենք ամփոփել սանի դպրոցին պատրաստվածության հիմնահարցի վերաբերյալ խորհրդային հոգեբանների մոտեցումներն ու տեսակետերը, նրանց կատարած ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքները, ապա տեսնում ենք, որ այն բավականին լայն հասկացություն է և ընդգրկում է սանի զարգացման գրեթե բոլոր ոլորտները: Նրանք առանձնացնում են դպրոցին պատրաստվածության հետևյալ բաղադրիչները. անձնային(դրդապատճառային) պատրաստվածություն; ինտելեկտուալ պատրաստվածություն, սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն, հուզակամային պատրաստվածություն: Նշվածների զարգացվածության բավարար մակարդակն էլ ապահովում է հետագա ուսումնական գործունեության արդյունավետությունը և դրանով իսկ վկայում սանի դպրոցական ուսուցման պատրաստվածության բարձր ցուցանիշների մասին:
- Նախնական գրաճանաչությունը ենթադրում է, որ մինչև դպրոց գնալը սանը պետք է.
- Իմանա գրավոր խոսքի այբբենական բնույթի մասին.
- Իմանա որոշ ուղղագրական հասկացություններ.
- Կարողանա լսել, հասկանալ բանավոր խոսքը, հաղորդակցվել,
- վերարտադրել լսածը, սեփական կարծիք հայտնել:
- ընկալել դեպքերի հաջորդականությունը, կանխատեսումներ անել, կապել պատմությունը սեփական կենսափորձին:
- Սանի նկատմամբ ճիշտ մոտեցումը և նրա խելամիտ դաստիարակությունը հաջող ուսուցման հիմքն են: Անձի մեջ հետաքրքրություն արթնացնել դեպի

դպրոցը, ուսումը, մշակել համառ ու հաստատակամ աշխատելու կայուն սովորություններ, մշտական հետաքրքրություն դաստիարակել պարապմունքների նկատմամբ. ահա՛ դպրոցի, մանկավարժի եւ ծնողի կարևոր պայմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ.Մանուկյան; Լ.Սմբատյան; Լ.Սարգսյան «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում» Երևան 2008 էջ 3-14
2. Հասմիկ Միտոյան, Լալա Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան, 2010թ.
3. Սարգսյան Ա. Երեխայի հոգեբանական պատրաստությունը դպրոցական ուսուցմանը: Երևան, 1998.
4. Վորլդ Վիժն «10 հարց ու պատասխան 3-6 տարեկան երեխաների մասին»; Երևան 2017; էջ 21-23
5. Նախաշավիղ 2009/25/